

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է Սերյոժա Մնացականյանը:

Մասնագիտությամբ իրավաբան՝ Սերյոժա Մնացականյանը 2005 թ.-ի փետրվարից աշխատել է քաղաքաշինության նախարարությունում՝ որպես առաջին կարգի մասնագետ: 2006թ.-ի հունվարի 25-ին տեղափոխվել է աշխատանքի ԼՂՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամ՝ որպես գլխավոր մասնագետ իրավաբան :

2009թ.-ի մարտի 02-ից մինչև 2016թ.-ի հունվարի 1-ը աշխատել է ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ որպես իրավական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ:

Սերյոժա Մնացականյանը Ընկերությունում աշխատում է 2016 թ.-ի հոկտեմբերի 17-ից՝ որպես իրավաբանական և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ: Որպես Ընկերության կորպորատիվ քարտուղար՝ պաշտոնավարում է 27.12.2016-ից մինչև օրս: